

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ ՅԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ (COVID-19) և ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

## Վերջին թարմացումներ.

11/6/20. Ներառված են փոխանցման վերաբերյալ թարմացումներ:

### 1. Ի՞նչ է կորոնավիրուսը?

Կորոնավիրուսների բազմաթիվ տեսակներ կան, որոնք հիվանդություններ են առաջացնում մարդկանց և կենդանիների մոտ: Այս վիրուսները բոլորը տարբեր են և շատ հեռակա կապ ունեն միմյանց հետ: Մարդկանց մոտ որոշ կորոնավիրուսները վերին շնչառական ուղիների թեթև հիվանդություններ են առաջացնում, ինչպիսին է սովորական մրսածությունը, իսկ մի քանիսը կարող են ավելի ծանր հիվանդություններ առաջացնել, օրինակ SARS կամ MERS. Կենդանիների մոտ, կան կորոնավիրուսներ, որոնք կարող են տարբեր նախանշաններ առաջացնել տնային կենդանիների մոտ, ներառյալ՝ շնչառական հիվանդություններ կամ փորլուծություն՝ կախեալ կենդանու տեսակից և կորոնավիրուսի տեսակից: Մինչ օրս, հայտնի չեն դեպքեր, որ տնային կենդանիների մոտ հիվանդություն առաջացնող կորոնավիրուսները վարակիչ լինեն մարդկանց համար:

### 2. Ի՞նչ է COVID-19-ը?

Որոշ կորոնավիրուսներ կենդանիներից կարող են զարգանալ (փոխվել) և դառնալ մարդկային նոր տիպի կորոնավիրուս, որը կարող է տարածվել մարդուց մարդ անցնելով. Ահա սա է տեղի ունեցել SARS-CoV-2 նոր կորոնավիրուսի հետ, որը մարդկանց մոտ առաջացնում է COVID-19 հիվանդությունը:

### 3. Ինչպե՞ս է COVID-19-ը տարածվում մարդուց մարդ?

Ինչպես շնչառական այլ հիվանդություններ, մարդու կորոնավիրուսները հիմնականում հիվանդ մարդուց տարածվում են ուրիշներին՝

- Կաթիլներով, որոնք արտադրվում են հազի, փռշտոցի կամ խոսելու միջոցով.
- Սերտ անձնական շփման միջոցով, օրինակ՝ վարակված մարդուն խնամելիս
- COVID-19 կարող է նաև տարածվել հավելով այն մեկերեսներին կամ առարկաներին, որոնց վրա առկա է վիրուս, այնուհետև դիպչելով բերանին, քթին կամ աչքերին, բայց սա չի համարվում վիրուսի տարածման հիմնական ճանապարհը: Որոշ մարդիկ հիվանդանում են COVID-19-ով՝ առանց որևէ ախտանիշների, սակայն նրանք կարող են վարակը տարածել մյուսների վրա:

### 4. Կարո՞ղ են տնային կենդանիները հիվանդանալ COVID-19-ով և տարածել այն?

Մինչ օրս ԱՄՆ-ում մի շարք դեպքեր են գրանցվել, երբ կենդանիների մոտ COVID-19-ի թեստը դրական է եղել, հիմնականում COVID-19-ով վարածված մարդկանց հետ սերտ շփում ունենալուց հետո: Պարզվում է, որ վիրուսա որոշ դեպքերում կարող է տարածվել մարդկանցից կենդանիների վրա: Այնուամենայնիվ, դեռևս չեն գրանցվել կենդանիներից իրենց տերերին կամ այլ մարդկանց COVID-19-ի փոխանցման դեպքեր: Այս պահին չկա որևէ ապացույց, որ ընտանի կենդանիները, ներառյալ՝ շներն ու կատուները, կարող են COVID-19 փոխանցել մարդկանց:



## Հիմնական կետեր.

Ապացույցներ չկան, որ տնային կենդանիները կարող են COVID-19 տարածել մարդկանց վրա:

Տնային կենդանիները կարող են մարդկանց այլ հիվանդություններ վարակել, ուստի լվացեք ձեր ձեռքերը նրանց հետ շփվելուց հետո:

Լավ հիգիենան և անասնաբուժական խնամքը միշտ օգնում են տնային կենդանիներին և մարդկանց լինել առողջ:

Որտեղի՞ց կարող է հասարակությունը հավելյալ տեղեկություններ ձեռք բերել:

**Լոս Անջելես Ծրչանի Հանրային Առողջապահության Վարչություն,**  
Զանգահարեք 2-1-1  
**Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչություն**  
916-558-1784

**Հիվանդությունների Վերահսկման ԵՎ Կանխարգելման Կենտրոններ**  
800-CDC-INFO  
800-232-4636

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ (COVID-19) և ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

### 5. Ես տնային կենդանի ունեմ, ի՞նչ պետք է անեմ?

Չնայած տնային կենդանիների մոտ COVID-19 վարակի վտանգը ցածր է, այլ հիվանություններ կան, որոնցով կենդանիները կարող են հիվանդանալ և կենդանիներից մարդկանց տարածել: Այդ պատճառով, կենդանիների շուրջը լինելուց հետո ձեռքերը լվանալը միշտ էլ լավ գաղափար է: Տնային կենդանիներին ներառեք ձեր ընտանիքի պատրաստվածությունը նախագծելիս:

### 6. Ես հիվանդ եմ COVID-19-ով և տնային կամ այլ կենդանիներ ունեմ: Ի՞նչ պետք է անեմ?

Դուք պետք է սահմանափակեք շփումը ընտանի կենդանիների և այլ կենդանիների հետ, քանի դեռ հիվանդ եք COVID-19-ով, ճիշտ այնպես, ինչպես կանեիք այլ մարդկանց շրջապատում: Երբ հնարավոր է, ձեր հիվանդության ընթացքում թող ընտանիքի մեկ այլ անդամ խնամի ձեր կենդանիներին: Եթե դուք հիվանդ եք, խուսափեք ձեր տնային կենդանու հետ շփումից, ներառյալ՝ շոյելը, գրկելը, ձեզ համբույրելը կամ լզելը և միասին նույն սնունդն ուտելը: Եթե դուք հիվանդ ժամանակ պետք է խնամեք ձեր տնային կենդանուն կամ կենդանիների շրջապատում լինեք, լվացեք ձեր ձեռքերը կենդանիների հետ շփվելուց առաջ և հետո և դիմակ կամ դեմքի ծածկոց կրեք: Նաև տեղյակ պահեք ձեր հասարակական առողջապահության կետին, որ դուք տանը կենդանիներ ունեք:

### 7. Կարո՞ղ եմ շանս հետ զբոսնել, եթե կարանտինի կամ մեկուսացման մեջ եմ?

Ոչ: Եթե դուք ձեզ հիվանդ եք զգում և COVID-19-ի արդյունքում գտնվում եք մեկուսացման մեջ, կամ դուք 14 օրվա կարանտինի մեջ եք՝ COVID-19-ով վարակվելու պատճառով, չեք կարող այդ ընթացքում լքել ձեր տունը: Այդ ընթացքում թող ձեր ընտանիքի անդամը շանը տանի զբոսանքի: Այլապես, խնդրեք կամ վարձեք մեկ ուրիշին՝ շանը քայլացնելու համար: Երբ այդ մարդը գալիս է, որպեսզի ձեր շանը տանի զբոսանքի, դուք երկուսդ էլ պետք է դիմակ (ծածկոց) կրեք և ձգտեք միմյանցից 6 ոտնաչափ կամ ավելի հեռավորության վրա մնալ: Երկուսդ էլ լվացեք ձեր ձեռքերը մարդկանց միջև շանը փոխանցելու գործողությունից առաջ և հետո: Շան հետ քայլողը կարող է իր սեփական թոկն օգտագործել:

### 8. Ես պետք է իմ ընտանի կենդանուն անասնաբույժի մոտ տանեմ: Ինչպե՞ս պահպանեմ սոցիալական հեռավորությունը?

Հնարավոր է ձեր անասնաբույժը իր աշխատանքը փոփոխել է՝ սոցիալական հեռավորություն պահպանելու նպատակով: Որոշ դեպքերում անհրաժեշտությունից ելնելով, նրանք կարող է չեղարկեն կամ փոփոխեն ընթացակարգերը և ժամադրությունները: Օրինակ՝ նրանք կարող է ձեզ պահանջեն կլինիկայից դուրս սպասել, մեքենայի մեջ գնել ձեր կենդանուն կամ նույնիսկ հեռակա բուժման ժամադրություն տալ: Դուք պետք է դիմակ կրեք անասնաբուժական կլինիկայի աշխատակազմի հետ շփվելիս: Բուժաշխատողները շատ մարտահրավերների առջև են կանգնած: Նախապես զանգահարեք ձեր անասնաբույժին և սերտ աշխատեք նրա հետ՝ որոշելու նրանց, ձեր և ձեր կենդանու առողջությունը պաշտպանելու լավագույն եղանակը: Եթե դուք հիվանդ եք, և ձեր տնային կենդանին անասնաբույժի կարիք ունի, փորձեք կազմակերպել, որ մեկ այլ մարդ տանի կենդանուն և զգուշացրեք հաստատությանը՝ մինչև ձեր կենդանու ժամանելը, որպեսզի նրանք ինչպես հարկն է պատրաստվեն:

Կան պարզ քայլեր, որոնք կարող եք ձեռնարկել ձեր տնային կենդանու և ընտանիքի առողջությունը հիվանդությունների մեծ մասից պաշտպանելու.

- Ձեր տնային կենդանու համար անազնաբույժի հետ հարաբերություններ հաստատեք:
- Ձեր կենդանու պատվաստումները ժամանակին արեք և լվերի և տիգերի դեմ միջոցներ օգտագործեք:
- Լվացեք ձեր ձեռքերը՝ կենդանուն, նրա անկողնուն, խաղալիքներին և կերամաներին ձեռք տալուց հետո:
- Եթե հիվանդ եք, հեռավորություն պահպանեք այլ մարդկանցից և տնային կենդանիներից և հաճախ լվացեք ձեր ձեռքերը:
- Եթե ձեր տնային կենդանին հիվանդ է, անասնաբույժի հետ կապվեք: Նրան հեռու պահեք մյուս տնային կենդանիներից՝ մինչև առողջանալ: Կենդանուն խնամելուց հետո, ամեն անգամ լվացեք ձեր ձեռքերը: